# ԲԱՌԱՐԱՆ

Արո—հայր
Ալենք էնել—երևան ելնել, հայտնվել
Ալիշ վերիշ—առևտուր
Ալմաղար—տեղյակ
Ակռատ—Նախաճաշ
Անգնալ—ուշանալ
Անթարի—վերնազգեստ
Ամյաթ—վստահություն
Անթրոց—ակիշ, թոնիր խառնելու ձող
Այար—թամբ
Այլըզ—ամսավճար
Աշել—փնտրել, նայել, դիտել
Աշաք—արդյոք
Աչկունք—աչք, պատի մեջ փորված դարակ, պահարան
Ասըռել—կառչել
Ավայի—տուն, շինություն, սենյակ
Ավդալ—ավազակ
Աֆ էնել—ներել

Բադան—պարիսպ, պատ
Բազըրիլ—սակարկել
Բաժ—հասակ, որպես չափի միավոր (բոյաչափ)
Բալաք—խատուտիկ, խաժ
Բալթա—կացին
Բալչըխ—կոթ
Բակիր—գրաստ
Բակշի—ձիու գլուխ բռնող, պահակ
Բայան էնել—հայտնել
Բաշդան—անմիջապես, ծայրից
Բաշլայել—սկսել
Բաշել—տրաքվել
Բառադի—իզուր, անպետք, անտեղի
Բարդաստա—աղախին
Բարոշ—պղինձ
Բաոոժ—արևկող
Բաքլայել—սպասել
Բեկ—գլուխ
Բեսլամա—աղախին
Բըլղուր—Նախապես խաշած չորացրած ձավար
Բըղիկ—փոքր կճուճ
Բինբաշի—հազարապետ
Բոզխանա—հասարակաց տուն
Բոշի—փոքր շուն
Բրին—վերք
Բրինդար—վիրավոր

Բուղալա—խենթ
Բուլ—թուփ
Բումբարաք—բարի վայելում
Բուռնութի—քթախոտ

Գազ—կանգուն (չափի միավոր)
Գազկան—կանգունաչափ
Գահ—ժամանակ
Գահլան, քեհլան—արագընթաց ձի
Գաչել—փնտրել
Գամ—սանձ
Գենա—նորից, դարձյալ
Գղան խերչոկ—ընկույզի կճեպ
Գըռթան—թուխս նստած հավ
Գիժոցնել—ձանձրացնել, գժվացնել
Գյամուկ—սանձած
Գոլել—1. տաքանալ, 2. հավաքվել, լճանալ
Գրտնակ—խմոր բացելու փայտե գործիք
Գուզ—ընկույզ
Գուժման—արադ, շուտ-շուտ, գլխա-պատառ
Գումռա—շատ, առատ
Գուրզ—երկաթյա մական

Դազգահ—աշխատելու սեղան
Դասթա—կապոց, փունջ
Դաստըմալ—թաշկինակ
Դավի—1. խնդիր, գործ, 2. վեճ
Դարձ—ամուսնությունից հետո հարսին տանելը հորենական տունը այցի
Դըզմամ—ահագին
Դել—քած, էգ շուն
Դեմա—այնտեղ, դիմացը
Դևա—ուղտ
Դիր—անգամ
Դովլաթ խուշի—արքայաթռչուն
Դոր—կարգ, հերթ
Դորճի—ջրաղացի հաճախորդ, հերթի սպասող
Դոստ—մտերիմ, բարեկամ

Ելք—ուռուցք
Եմակ—կերակուր

Զաբութ—զափթիա, ոստիկան
Զադ—կերակուր, պաշար.
Զաթի—առանց այդ էլ
Զաղել—հետք թողնել, խազել
Զայիֆ—նիհար
Զամանդան—ժամանակով
Զանիաթ—արհեստ
Զայիֆնալ—նիհարել
Զարղըրել—1. խնդրել, աղաչել, 2. զանգատվել, դժգոհել
Զըմբիլ—զամբյուղ
Զընար—մեծ քար, ժայռ, քարաբեկոր
Զիաֆաթ—խնջույք
Զնըֆթ—լուցկի

Էդավա—այդպես
Էլեկ—ելակ, բաճկոնակ
Էմէլ, էմ լէ—հիմա էլ, նորից, կրկին
Էրակ—անձրև
Էրկու հոգով—հղի

Ըխթիար մեջլիս—1. ծերակույտ, սինոդ, 2. ծերունի
Ըռահաթ—հանգիստ
Ըռահմ—գութ, խիղճ
Ըռըկուկ—խռոված, նեղացած
Ըռկել—խռովել
Ըռպեկ—ցորենի չափ

Թաբուր—գունդ
Թալալ—մունետիկ
Թալիս—պարկ
Թամբիհ էնել—հանձնարարել
Թամուզ—հուլիս ամիս
Թամուզ—մաքուր
Թավ—բոլոր, լրիվ
Թավան—առաստաղ
Թավլա—ձիանոց
Թավլու—խաղի տեսակ, նարդի
Թավուր—տեսակ

Թարզի—դերձակ
Թարիֆ էնել—պատմել, բացատրել
Թարլիֆ—հրավեր
Թաքրար—նորից, կրկին
Թարբրել—կրկնել
Թաքու—թագուհի
Թերուր—փետուր
Թերզի—տես թարզի
Թըվանք—հրացան
Թըվեկ—օջախ
Թիմարել—ձիու կամ եղան մարմինը խոզանակով խնամել
Թլխել—ցկնել, վիժել
Թոխա էնել—ձեռ թոթվել, բարեել
Թոռ—ուռկան
Թուջար, թյուճար—առևտրական, վաճառական
Թուհաֆ—զարմանալի

Ժըղլիլ—զրուցել, ժամանակ անցկացնել
Ժըխո—արդեն, առանց այդ էլ

Իդարա—ապրուստի միջոց, ուտելիք
Իդարա ընել—ապրուստ հայթայթել
Իզին—հրաման
Իլիմդար—1. գիտուն, 2. գուշակող
Իմնել—զարթնել
Իշալլահ—երանի, աստուծով (բացականչական է)
Իրղատ—բանվոր
Իքրամ էնել—պատվել

Լալ ու դըռ—անգին քար
Լըղըմ—թունել, անցք
Լանկա—աքացի
Լանկառի—սկուտեղ
Լավա ընել—խնդրել
Լըմեժ—աղոթք
Լող—ծայրը կեռ դանակ
Լողմա—պատառ
Լորիկ—գնչու
Լուսմութ, լուսումութ—առավոտ
Լուսվան—պաղ

Խաթա—փործանք
Խազ—սազ
Խազալ—եղնիկ
Խաղարած—սազարած
Խազբանդ—սազարած
Խազի—դատավոր
Խաթ—հարկ
Խաթրան—կուպր
Խալաբալըխ—աղմուկ, վեճ
Խալի—ամայի
Խանա—գոնե
Խանչեցին—կանչեցին
Խայդ—երկաթե օղ
Խայիմ—ուժեղ, պինդ
Խայլոն—ծխամորճ
Խայմախամ—նահանգապետ
Խառասա—լծակ
Խառըշ ըլնել—խառնվել
Խասաֆաթ—մտահոգություն
Խասիաթ—բնավորություն
Խաստի—միտումնավոր
Խավազ—ծառա
Խավաճի—սրճարանատեր
Խաստ—ձգտում
Խատ—ղաթ, հարկ
Խարախոլ—պահակ
Խարղա, խարղո—քեռորդի
Խափուշիկ—խափշիկ
Խեչ—մոտ, կողքին
Խըմաթքար—աղախին, ծառա
Խըդար—չափ
Խըզմըթ—գործ
Խըլաթ—նվեր
Խըշիմ—անվարժ, համբակ
Խըսա—խոսք, զրույց
Խըսիլ—փսիաթ
Խըսմաթ—բախտ, բաժին
Խիամաթ—1. հավիտյան, աշխարհի վերջ, 2. սառնամանիք
Խշո—արդեն, հատկապես
Խոզի—երանի, իցիվ թե
Խոխ—1. գանգ 2. կլոր սալաքար
Խոնախ—հյուր
Խրար—մազից հյուսված պարկ

Խութի—տուփ
Խուշխանա—պղինձ
Խուպլի—հյուսիս

Կանգար—կամարակապ ջրուղի
Կավըռ—ոչխար
Կյաճկե—թուրքի աղջիկ
Կյառ, կըռ-խուլ
Կնեղ—չարաճճիություն
Կողել—պատրաստել, հաց թխել
Կցվան—ճանապարհների միացման տեղ
Կուլար—թաղիք

Հագ էնել— 1. ախորժել, 2. սիրել
Հալարի—չափի միավոր, արշին
Հալաքութ—վտանգ
Հախ—իրավունք
Հախլու—նշանած
Հաշութեն—հաշի գնալ
Հայըֆ, հայիֆ—վրեժ
Հանթապ—անութի տակ
Հանք ու բեն—շունչ
Հաշարել—զսպել
Հավուզ—ավազան
Հարքեշ—ամեն ոք
Հաֆտրիլ—հոգնել
Հեղ—անգամ
Հեռևու—հեռվից
Հեքիմ—բժիշկ
Հուղուր—պատրաստ, դիմաց
Հըդրաց—միասին
Հըլու—ուլունք
Հընչի—մինչև
Հըտրանց—միմյանց հետ
Հիդրաց—միասին
Հիվ—ընտրություն
Հլորվիլ—բախվել
Հոգըրիլ—հաշտվել
Հոդա—այդտեղ
Հոլըք—քոլիկ
Հոլըցի—այդտեղից
Հուր-մուր—մանր-մունր, ինչք

Ձի—ինձ
Ձուկ թալել—ուռկան ձգել

Ղայնամիշ էզնիլ—եռալ

Ճախսառ—շեգ
Ճակել—վարձատրել
Ճապ—ձախ
Ճարեկ—սարյակ
Ճլոթ—ապտակ
Ճոռ—շեղ, ծուռ

Մատվել—անհանգստության մատնվել
Մատուր—կույր, զուրկ
Մարամ—իղձ, նպատակ
Մափուս էնել—բանտարկել
Մաֆ էնել—ոչնչացնել
Մեյդան—ասպարեզ, հրապարակ
Մաժթա—մեճիտիյե
Մախուլ—ծանրաբարո
Մահանա—պատրվակ
Մահմուր—զուրկ
Մայամ—անպայման
Մանգանա—մամլիչ
Մանսում—անմեղ
Մասնավորիլ—հաղորդություն տալ
Մեշա—անտառ
Մեչլիս—ծերակույտ
Մըգրախ—նիզակ
Մըթրըպ—գնչու
Մըխ—բևեռ
Մանիլ—նմանվել
Մըշըկ—ծառա
Մըսաֆըր—հյուր
Մըտ—մոտ
Մժլիլ—խոսել, խորհրդակցել
Մինդար—ներքնակ
Միշակ—մենակ
Մոհկամ, մոհկյամ—ուժեղ, ամուր
Մուսանդարա—ավելորդ իրերի վա-
րագուրված տեղ

Ցալվար—խնդրանք
Ցանդիա—նրանք
Ցուդբաշի—հարյուրապետ
Ցուքլիք—անկողինը հավաքելու պա-
տըրհան

Նեջիր—որս
Ներու—չկրտված այծ, չամորձատված
Նիաթ էնել—տխրել
Նստիլ-կայնիլ—հարաբերություն ունենալ

Շավխ—լույս, շողք
Շարթ—պայման
Շարխ—խիճ
Շելա ըլնել—ուշաթափվել
Շենք—քայլ
Շըմկըլ—շեմք
Շնոխկալ—շնորհակալ լինել

Ոն—ով
Ոշ—օգուտ
Ո՞ր—ո՞վ

Չադր—վրան
Չաթ ու փոթ—շորեր
Չարա—հնար, դարման
Չեշիտ—տեսակ, կերպարանք
Չոք—ծունկ
Չվան—պարան
Չունքի—քանի որ

Պալոր—մահակ
Պալտա—կացին
Պահյա, պայա—հետիոտն
Պառապ—պառավ
Պառեկի հուլունք—ողնաշար
Պատել—ընկնել
Պարզ—ասպարեզ
Պարզել—փռել
Պարոր—մանկեռի երկու կողմերի եռանկյուն կազմող փայտերը
Պռուկ—եզերք
Պուպուշտակ—ծոծրակ

Ջայնում—դժոխք
Ջան—անձ
Ջանդակ—դիակ, մարմին
Ջաղամաթ—ժողովուրդ
Ջարչի—մունետիկ, փերեզակ
Ջարիե—սպասուհի
Ջաք ու սիլա—զենք ու զրահ
Ջեաշիմ—սփռոց, կարպետ
Ջըրըրվիլ—փորձվել
Ջըրդ—գող
Ջուհար—լուր, պատասխան

Ռահմ, ռամ—գութ, խիղճ, ողորմություն
Ռեշք, ըռեշք—հետք, ոտնահետք
Ռըհաթ—դյուրին, հանգիստ
Ռըշա—խնդիր
Ռըսվա—խայտառակ

Սաբր—համբերություն
Սանդուխ—արկղ
Սանք—տեսնենք
Սանատ—մուրհակ
Սանգու—պաղ
Սանյաթ—արհեստ, զբաղմունք
Սավախ—խենթ
Սարխոշ—հարբած, գինով
Սարկի—փռվածք
Սաքու—վերնազգեստ
Սեիս—ձիապան
Սեխ—ցից
Սեյր էնել—դիտել
Սեռ, սըռ—գաղտնիք, դյութանք
Սերսուր—մաքուր
Սիլեհ—զենք
Սըհաթ—ժամ
Սըպե—սպի
Սկել—սուզվել
Սոխախ—նեղ փողոց
Սոսըրթել—խայտառակել
Սրա—կարգ, հերթ
Սորա—հետո
Սուկել—կառուցել, պատրաստել
Սուրյաթ—դեմք

Վազ կենալ—ձեռք քաշել, հեռու մնալ
Վախըրի—ժամանակ
Վաաա էնել—ուխտել
Վաք, վանք—ցըաղացի փայտից կամ



41—276

*քարից թեք շրուշի, որից ջուրն ուժեղ թափով հոսում է ջրանիվի վրա*

*Վազման—վազքով*
*Վելհասրլ—վերջապես*
*Վեճել—որոշել*
*Վերկի—տուրք, հարկ*

*Տաժի—որսկան շուն*
*Տամառի կնիկ—խորթ կին, համառ կին*
*Տայր—թռչուն*
*Տապալ—պատի կողք, հեղե թումբ*
*Տըղկել—թրջել, ջրի մեջ փափկացնել*
*Տիտ—կամար*
*Տքուն—տնքոց*

*Ցաքի—ցաքան*
*Ցուցուր—ձի*

*Ուստա—վարպետ*
*Ուրին—իրեն*

*Փալա—ընտանիք*
*Փաճուճ—պարուր*
*Փայ—բաժին*
*Փայդոստ—դադար*
*Փեթակ—ալյուրի ամբար*
*Փեշքիր—անձեռոց, սրբիչ*
*Փել—կարճ կոտոշներ ունեցող*
*Փերթ—ձեռք (շոր)*
*Փիճ, փեճ—ուս*
*Փիճրար—կախարդ*
*Փինջ—ցից, սեպ*
*Փիցցել—սատկացնել, սպանել*
*Փիցուկ—սպանված*
*Փոխրակ—ամուսնու երկրորդ կինը*
*Փոշմնել—զղջալ*
*Փուշի—գլխաշոր, շղարշ*

*Քաշել, դաշել—փնտրել, որոնել*
*Քարխեծ—վերք՝ ոտքի ներբանի*
*Քարման—իլիկ*
*Քահրպար—սաթ*
*Քասար, քյասար—իղձ*
*Քելեխ—հոգեճաշ*
*Քըլսե—կիր*
*Քըշըկ—թավլի, նարդի*
*Քըմալ, քյամըլ—չափահաս*
*Քըրվել—հայհոյել*
*Քյար—օգուտ, շահույթ*
*Քոխ—խուղ, փոքրիկ տնակ*
*Քոմել—ժողվել, հավաքել*
*Քուլակ—ջրհան*
*Քուռսի—աթոռ, նաև՝ թոնրի վրա դրվող սեղան*

*Օթկուն—անգամ*
*Օլախ—էշ*
*Օղմկցնիլ—կանգնեցնել, հենել*

*Ֆահմել—հասկանալ, կռահել*
*Ֆաս—Արևելքում օգտագործվող կարմիր գլխարկ, սև ծոպով*
*Ֆեքի—միրգ*
*Ֆըլըթիլ—շրշվել ու ընկնել, դուրս պրծնել*
*Ֆիլան—այսինչ*